ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ

Հ Ր Ա Մ Ա Ն

№ 213/71 «15» 11 2021

ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ ՆԵՐՔԻՆ ԳԻՏԱԿԱՆ ԴՐԱՄԱՇՆՈՐՀՆԵՐԻ ՖԻՆԱՆՍԱՎՈՐՄԱՆ ՄՐՑՈՒՅԹ ԿԱԶՄԱԿԵՐՊԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Երևանի պետական համալսարան» հիմնադրամի (այսուհետ՝ ԵՊՀ) կանոնադրության 56-րդ կետի 10-րդ ենթակետով.

հրամայում եմ

1. Ներքին գիտական դրամաշնորհների ֆինանսավորման նպատակով կազմակերպել գիտական թեմաների հայտերի մրցույթ:
2. Հաստատել մրցույթի հրավերի փաթեթը՝ համաձայն հավելված 1-ի:
3. Սույն հրամանի կատարման նկատմամբ հսկողությունը վերապահել ճշգրիտ և բնագիտական մասնագիտությունների գծով պրոռեկտորին (Ռ. Բարխուդարյան) և Հումանիտար և հասարակագիտական մասնագիտությունների գծով պրոռեկտորին (Էլինա Ասրիյան):
4. Սույն հրամանի մասին տեղեկացնել ԵՊՀ աշխատողներին:

ԵՊՀ ՌԵԿՏՈՐԻ
ԺԱՄԱՆԱԿԱՎՈՐ ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ՝ Հ. Հովհաննիսյան

ԵՊՀ ՆԵՐՔԻՆ ԳԻՏԱԿԱՆ ԴՐԱՄԱՇՆՈՐՀՆԵՐԻ ՖԻՆԱՆՍԱՎՈՐՄԱՆ ՆՊԱՏԱԿՈՎ ԳԻՏԱԿԱՆ ԹԵՄԱՆԵՐԻ ՀԱՅՏԵՐԻ ՄՐՑՈՒՅԹ

1. Ընդհանուր դրույթներ

1.1. Երևանի պետական համալսարանի ներքին գիտական դրամաշնորհի (այսուհետ՝ Դրամաշնորհ) հայտերի (այսուհետ՝ Հայտ) մրցույթը (այսուհետ՝ Մրցույթ) անցկացվում է ԵՊՀ ռեկտորի հրամանի համաձայն:

1.2. Երևանի պետական համալսարանի գիտական քաղաքականության վարչությունը (այսուհետ՝ Վարչություն) համակարգում և կազմակերպում է ԵՊՀ ներքին դրամաշնորհների ֆինանսավորման համար նախատեսված մրցույթը:

1.3. Ֆինանսավորմանը նախատեսված մրցույթով սահմանված դրամաշնորհների անվանակարգերն են՝ ֆիզիկամաթեմատիկական, բնագիտական, բանասիրական, հասարակագիտական, հայագիտական ու հումանիտար գիտություններ և միջգիտակարգային՝ յուրաքանչյուր անվանակարգի համար մեկ դրամաշնորհ:

1.4. Հայտը չի քննարկվում, եթե՝

- Գիտական ղեկավարի կողմից ներկայացվել է Բիալի ցանկերում (Beall's list, https://beallslist.net/) ներառված կեղծ կամ «գիշատիչ» հրատարակչություններում կամ պարբերականներում հրատարակված հոդված,
- չի բավարարում Մրցույթի հրավերի պայմաններին,
- միաժամանակ ներկայացված է այլ գիտական մրցույթների:

1.5. Դրամաշնորհի շրջանակներում իրականացված հետազոտության արդյունքները գիտական ամսագրերում հրապարակելիս անհրաժեշտ է նշել ԵՊՀ կողմից ստացած աջակցության մասին.

- *Հետազոտությունն իրականացվել է Երևանի Պետական Համալսարանի ֆինանսական աջակցությամբ՝ _____ ծածկագրով գիտական դրամաշնորհի շրջանակներում:*
- *Исследование выполнено при финансовой поддержке ЕГУ в рамках научного проекта № _____.*
- *The work was supported by the YSU, in the frames of the research project № _____.*

Համապատասխան նշման բացակայության դեպքում հրապարակումը չի համարվելու Դրամաշնորհի արդյունք, հետևաբար՝ չի ընդունվելու Հաշվետվության մեջ:

1.6. Դրամաշնորհի իրականացման ընթացքում, ըստ ներկայացված ժամանակացույցի, Վարչություն է ներկայացվում ընթացիկ Հաշվետվություն, որի հիման վրա Հանձնաժողովը տալիս է եզրակացություն՝ Դրամաշնորհի ֆինանսավորումը շարունակելու նպատակահարմարության մասին:

1.7. Դրամաշնորհի իրականացման ընթացքում Վարչությունը կարող է իրականացնել Դրամաշնորհի մշտադիտարկում և արդյունքները ներկայացնել Հանձնաժողովին:

1.8. Մշտադիտարկման արդյունքները Հանձնաժողովը պետք է հաշվի առնի՝ Դրամաշնորհի ֆինանսավորումը շարունակելու նպատակահարմարության մասին եզրակացություն տալիս:

1.9. Դրամաշնորհի կատարման ընթացքում Հանձնաժողովի կողմից անբավարար գնահատական ստանալու և ֆինանսավորումը դադարացվելու դեպքում ղեկավարը երեք տարի ժամկետով զրկվում է ԵՊՀ ներքին դրամաշնորհների դիմելու իրավունքից:

1.10. Դրամաշնորհի ավարտից հետո Վարչություն է ներկայացվում ամփոփիչ Հաշվետվություն, որի հիման վրա Հանձնաժողովը տալիս է եզրակացություն՝ Հաշվետվությունն ընդունելու մասին:

1.11. Վարչությունը կարող է ֆինանսավորման երաշխավորված Դրամաշնորհի անոտացիան և Հաշվետվությունը հրապարակել տպագիր կամ էլեկտրոնային եղանակով:

2. Մրցույթը համակարգող Հանձնաժողով

2.1. Դրամաշնորհի հայտերի փորձաքննություն կազմակերպելու նպատակով ձևավորվում է հանձնաժողով, որի կազմը հաստատվում է ԵՊՀ ռեկտորի հրամանով:

2.2. Հանձնաժողովը կազմակերպում է փորձաքննություն, հաստատում է փորձագիտությունների արդյունքները, անհրաժեշտության դեպքում կազմակերպում կրկնակի փորձաքննություն և ռեկտորի հաստատման ներկայացնում ֆինանսավորմանն երաշխավորված դրամաշնորհների ցանկը:

2.3. Հանձնաժողովի նիստն իրավազոր է, եթե դրան մասնակցում են անդամների ընդհանուր թվի առնվազն 2/3-ը:

2.4. Հանձնաժողովի որոշումներն ընդունվում են նիստին ներկա անդամների ձայների պարզ մեծամասնությամբ:

3. Խմբի անդամներին ներկայացվող պահանջները

3.1. Գիտական ղեկավարը պետք է հանդիսանա ԵՊՀ հիմնական աշխատող:

3.2. Կատարողները, բացառությամբ հրավիրյալ պրոֆեսորի, պետք է հանդիսանան Հայաստանի Հանրապետության մշտական բնակիչներ կամ Հայաստանի Հանրապետության ռեզիդենտներ:

3.3. Խմբի անդամները պետք է լինեն առնվազն չորսը /ներառյալ հրավիրյալ պրոֆեսորը/, որոնցից առնվազն 50%-ը պետք է հանդիսանան ԵՊՀ հիմնական աշխատողներ:

3.4. Մրցույթին չեն կարող մասնակցել միաժամամանակ երկու և ավել գիտական այլ դրամաշնորհ ունեցող(կատարող) անձինք:

3.5. Գիտական ղեկավար կարող է լինել այն անձը, ով՝

3.5.1. ծնվել է 1961 թվականի հունվարի 1-ից հետո,

3.5.2. ունի գիտական աստիճան,

3.5.3. վերջին հինգ տարիների ընթացքում ունի առնվազն երեք գիտական հոդված «Scimago Journal & Country Ranking (SJR)» պորտալում (https://www.scimagojr.com/journalrank.php) ընդգրկված ամսագրերում,

3.6. Խմբի անդամներից առնվազն մեկը պետք է լինի հրավիրյալ պրոֆեսոր՝ գիտական աստիճան ունեցող և օտարերկրյա գիտական կազմակերպությունում Դրամաշնորհին առնչվող գիտահետազոտական գործունեությամբ զբաղվող անձ:

3.7. Հրավիրյալ պրոֆեսորի Հիրշի ինդեքսն (h-index) ըստ «Scopus» *(https://www.scopus.com/freelookup/form/author.uri)* գիտատեղեկատվական շտեմարանի տվյալների, Հավելված 1.1-ի 1-ին բաժնով ներկայացված գիտական և գիտատեխնիկական գործունեության բնագավառների համապատասխան մասնագիտություններով իրականացվելիք Թեմաների համար պետք է լինի առնվազն 7, 2-րդ բաժնով իրականացվելիք Թեմաների համար՝ առնվազն 3: Միջգիտակարգային մասնագիտություններով իրականացվելիք Թեմաների դեպքում պետք է դիտարկել հրավիրյալ պրոֆեսորի գիտական ուղղվածությունը:

3.8. Թեմայի իրականացման ամբողջ ժամանակահատվածում (36 ամիս) առնվազն 2 կիսամյակ (2*120 օր) Հրավիրյալ պրոֆեսորը(ները) պետք է գտնվի Հայաստանի Հանրապետությունում և դասավանդի 6 կրեդիտին համապատասխան մասնագիտական դասընթացներ, որից 1 կիսամյակը (120 օր) դրամաշնորհի առաջին տարում: Հատուկ դեպքերում (համապատասխան պրոռեկտորի հաստատմամբ և

կարդացվող դասընթացը սեղմ ժամկետում իրագործելու դեպքում) հրավիրյալ պրոֆեսորը կարող է գտնվել Հայաստանի Հանրապետությունում ավելի սեղմ ժամկետներում սակայն ոչ պակաս քան 60 օր, որից 30 օրը դրամաշնորհի առաջին տարում: Բացառիկ դեպքերում Դրոռեկտորների արտոնմամբ կարելի է ուսուցման գործընթացը կամ նրա մի մասը կազմակերպել առցանց ձևաչափով:

3.9. Հրավիրյալ պրոֆեսորն, իր պաշտոնական էլեկտրոնային հասցեից պետք է grants@ysu.am էլեկտրոնային հասցեին ուղարկի իր կենսագրական տվյալները (Curriculum Vitae) և հաստատող նամակ (Letter of Confirmation)՝ նշելով Դրամաշնորհի իրականացման աշխատանքներին մասնակցության և Դրամաշնորհի կատարման ընթացքում դասավանդելու պատրաստակամության մասին:

3.10. Գիտական ղեկավարը և կատարողները չեն կարող ընդգրկվել Մրցույթին ներկայացված մեկից ավելի Հայտերում:

3.11. Խմբի անդամներից առնվազն մեկը պետք է հանդիսանա ԵՊՀ ուսանող կամ ասպիրանտ և ծնված լինի 1991 թվականի հունվարի 1-ից հետո:

3.12. Խմբի անդամը պետք է հանդիսանա առնվազն մագիստրատուրայի ուսանող կամ դիպլոմավորված մասնագետ (բակալավրի աստիճան ունեցող անձը կամ բակալավրիատի ուսանողը չի կարող ընդգրկվել Խմբում):

4. Ակնկալվող արդյունքները

4.1. Թեմայի ավարտից հետո Խմբի անդամները տվյալ Թեմայի շրջանակներում պետք է ունենան Մրցույթի հրավերի «1.5.» ենթակետով սահմանված նշումով հրապարակումներ.

4.1.1. Ֆիզիկամաթեմատիկական և Բնագիտական անվանակարգերում ներկայացված թեմաների համար տարեկան առնվազն մեկ (դրամաշնորհի ընթացքում առնվազն 3 հոդված, ըստ ժամանակացույցի) գիտական հոդված «Scimago Journal & Country Ranking (SJR)»-ում ամսագրերի դասակարգման առաջին կամ երկրորդ քառորդում (Q1, Q2, Q3 quartile) ընդգրկված ամսագրերում (https://www.scimagojr.com/journalrank.php) համաձայն ներկայացված ժամանակացույցի,

4.1.2. Բանասիրական, Հասարակագիտական, Հայագիտական ու Հումանիտար գիտություններ և Միջգիտակարգային անվանակարգերում ներկայացված

թեմաների համար տարեկան առնվազն մեկ (դրամաշնորհի ընթացքում առնվազն 2 հոդված, ըստ ժամանակացույցի) գիտական հոդված «Scimago Journal & Country Ranking (SJR)»-ում ամսագրերի դասակարգման առաջին, երկրորդ կամ երրորդ քառորդում (Q1, Q2, Q3, Q4 quartile) ընդգրկված ամսագրերում (https://www.scimagojr.com/journalrank.php) համաձայն ներկայացված ժամանակացույցի :

4.2. Մրցույթի հրավերի «4.1.» ենթակետում նշված պայմանը չկատարելու դեպքում դրամշնորհը կարող է չերաշխավորվել հետագա ֆինանսավորման:

5. Հայտ ներկայացնելը

5.1. Հայտը Վարչություն պետք է ներկայացնի Գիտական ղեկավարը: Հայտը պետք է ներառի հետևյալ փաստաթղթերը.

- Գիտական ղեկավարի դիմումը (Հավելված N 1.2),
- Խմբի անդամների կենսագրությունները,
- Նախագծի նկարագրություն,
- Ծախսերի նախահաշիվը (այսուհետ՝ Նախահաշիվ),
- Ժամանակացույցը:

6. Ժամկետները

6.1. Հայտերը Վարչություն են ներկայացվում աշխատանքային օրերին՝ 10:00-17:00: Փաստաթղթերի ներկայացման վերջնաժամկետը 2022 թվականի հունվարի 10-ն է:

6.2. Կարևոր ժամկետներ[1]

	Սկիզբ	Վերջ
Հայտի ներկայացման վերջնաժամկետ	Հունվարի 10, 2022	
Հայտերի փորձաքննություն	Հունվարի 10, 2021	Հունվարի 30, 2021
Հրավիրյալ պրոֆեսորի կենսագրական տվյալներ և մասնակցությունը հաստատող նամակ	Փետրվարի 10, 2022	
Արդյունքների ամփոփում	Փետրվարի 10, 2022	
Դրամաշնորհի մեկնարկ	Փետրվարի 15, 2022	
Իրականացում	Փետրվարի 10, 2022 - Փետրվարի 10, 2025	

[1] ժամկետների փոփոխությունը հնարավոր է միայն ռեկտորի հրամանով

7. Հայտերի գիտական փորձաքննությունը

7.1. Վարչությունն ուսումնասիրվում է ներկայացված Հայտերի համապատասխանությունը Մրցույթի պայմաններին, ինչի վերաբերյալ տեղեկատվությունը տրամադրվում է Հանձնաժողովի քննարկմանը:

7.2. Հանձնաժողովի որոշմամբ հաստատվում է Մրցույթի պայմաններին բավարարող և գիտական փորձաքննության ենթակա Հայտերի ցանկը:

7.3. Գիտական փորձաքննության ժամանակ գնահատվում են Թեմայի արդիականությունը, մշակվածության աստիճանը, նորույթը, իրականացման նախադրյալները, աշխատանքի ծավալի, իրականացման ժամկետների հիմնավորվածությունը, միջազգային համագործակցության նպատակահարմարությունը, գիտական արդյունքների տնօրինումը և տարածումը, միջգիտակարգային բնույթը, գիտության տվյալ մասնագիտության առանձնահատկություններից բխող այլ հարցեր:

7.4. Հանձնաժողովը Վարչության հետ համատեղ մշակում և հաստատում է Հայտերի գիտական փորձաքննության և հարցազրույցի գնահատման թերթիկները:

7.5. Հանձնաժողովը, անհրաժեշտության դեպքում, գիտական փորձաքննության նպատակով կարող է ներգրավել անկախ փորձագետներ:

7.6. Հայտը գիտական փորձաքննության է ենթարկվում առնվազն երկու փորձագետների կողմից: Յուրաքանչյուր Հայտի համար փորձագետը լրացնում է գիտական փորձաքննության գնահատման թերթիկը:

7.7. Հայտի գիտական փորձաքննության վերջնական գնահատականը փորձագետների գնահատականների միջին թվաբանականն է:

7.8. Վարչության և փորձագետների կողմից Հայտի բովանդակության, գիտական փորձաքննության ընթացքի և արդյունքի վերաբերյալ տեղեկությունների տրամադրումն այլ անձանց արգելվում է՝ համաձայն «Գիտական և գիտատեխնիկական փորձաքննության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված դրույթների:

7.9. Գիտական փորձաքննության ավարտից հետո Հայտերի գիտական փորձաքննության վերջնական գնահատականների վարկանիշային ցանկը քննարկվում է Խորհրդում և ներկայացվում համապատասխան պրոռեկտորի հաստատմանն:

7.10. Վարչությունը Գիտական ղեկավարներին է տրամադրում գիտական փորձաքննության արդյունքները, որոնք ներառում են փորձագետների եզրակացությունները (ապահովելով փորձագետի անանունությունը):

8. Այլ դրույթներ

8.1. Դրամաշնորհների 36-ամսյա ֆինանսավորման առավելագույն ծավալներն են. 7920,0 հազար ՀՀ դրամ յուրաքանչյուր տարվա համար (Հրավիրյալ պրոֆեսորի աշխատանքի վարձատրությունը սահմանվում է հավելյալ 8.2 կետով), որից 1,200,000 դրամը գործողումների և/կամ գրասենյակային սարքերի համար:

8.2. Հրավիրյալ պրոֆեսորի համար աշխատանքի վարձատրության ընդհանուր գումարը չի կարող գերազանցել 5000,0 հազար ՀՀ դրամ:

8.3. Հրավիրյալ պրոֆեսորի Հայաստանի Հանրապետություն գործուղման ծախսերը հոգալու համար նախատեսել առավելագույնը 600,0 հազար ՀՀ դրամ (12-ամսվա կտրվածքով):

8.4. Հրավիրյալ պրոֆեսորի կեցությունը երկու կողմերի համաձայնությամբ կարող է կազմակերպվել ԵՊՀ հյուրերի տանը:

8.5. Ընթացիկ դրամաշնորհներում կարելի է փոփոխություններ կատարել՝ դրանք նախապես համաձայնեցնելով Վարչության հետ՝ համապատասխան պրոռեկտորի հաստատմամբ:

ԳԻՏԱԿԱՆ ԵՎ ԳԻՏԱՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԲՆԱԳԱՎԱՌՆԵՐԸ ԵՎ ՄԱՍՆԱԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ՝ ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆ ԴԱՍԻՉՆԵՐՈՎ

Բաժին 1	Բաժին 2
1. Ֆիզիկամաթեմատիկական 1.1. Մաթեմատիկա 1.2. Ինֆորմատիկա և համակարգչային գիտություններ 1.3. Ֆիզիկա և աստղագիտություն 1.4. էլեկտրատեխնիկա, էլեկտրոնիկա, էներգետիկա, համակարգչային և տեղեկատվական տեխնոլոգիաներ 1.5. Մեխանիկա 1.6. Նանոտեխնոլոգիա 2. Բնագիտական 2.1. Քիմիա 2.2. Երկրի մասին և դրան հարակից բնապահպանական գիտություններ 2.3. Կենսաբանական գիտություններ 2.4. Քիմիական տեխնոլոգիաներ 2.5. Նյութագիտություն 2.6. Էկոլոգիա 2.7. Կենսատեխնոլոգիա 2.8. Ֆարմացիա	3. Հասարակագիտական 3.1. Հոգեբանություն 3.2. Տնտեսագիտություն և գործարարություն 3.3. Մանկավարժական գիտություններ 3.4. Սոցիոլոգիա 3.5. Իրավունք 3.6. Քաղաքական գիտություններ 3.7. Սոցիալական և տնտեսական աշխարհագրություն 3.8. Զանգվածային լրատվություն և հաղորդակցություն 4. Հայագիտություն և հումանիտար գիտություններ 4.1. Պատմություն, հնագիտություն 4.2. Լեզվագիտություն, գրականագիտություն 4.3. Փիլիսոփայություն, էթիկա 4.4. Աստվածաբանություն, կրոնագիտություն 4.5. Արվեստագիտություն
5. Միջգիտակարգային դրամաշնորհները ենթադրում են նշված գիտական երկու կամ ավելի բնագավառներում հետազոտությունների համատեղում:	

Հավելված N 1.2

ԵՊՀ Ռեկտորի ժ/պ

Հ. Հովհաննիսյանին

ԵՊՀ աշխատող_____ ից
(անուն ազգանուն)

_____
(էլ-հասցե)

_____
(հեռախոս)

ԴԻՄՈՒՄ

Խնդրում եմ ընդունել ԵՊՀ ներքին գիտական դրամաշնորհների մրցույթին մասնակցության
«_____» վերնագրով հայտը:

Հաստատում եմ, որ ծանոթացել և համաձայն եմ մրցույթի հրավերի պայմաններին:

Դիմող՝ _____ (_____)
(ստորագրություն) *(անուն, ազգանուն)*

«____» _____ 2021 թ.

ԵՊՀ ՀՀ ՆԵՐՔԻՆ ԳԻՏԱԿԱՆ ԴՐԱՄԱՇՆՈՐՀՆԵՐԻ ՀԱՅՏ

ՏԻՏՂՈՍԱԹԵՐԹ

1. Հայտի
   - վերնագիրը _____
   - Project Title
   - բնագավառը / մասնագիտական դասիչը _____
   - Field of Science
2. Հուշող (բանալի) բառեր _____
   - Key Words _____
3. Խմբի ղեկավարի ազգանունը անունը հայրանունը _____

Principle Investigator (Name, Surname) _____

4. ծննդյան տարեթիվը			
5. գիտական աստիճանը		6. պաշտոնը	
7. հեռախոսը		8. էլեկտրոնային հասցեն	

9. Թեմայի կատարման համար անհրաժեշտ ժամանակահատվածը		10. Խմբի (*ներառյալ ղեկավարը*) անդամների թիվը	
11. Հայցվող ընդհանուր գումարը հազար դրամ:			

12. Հայտի ղեկավարի ստորագրությունը _____

«____» _____ 2021 թ.

ՆԱԽԱԳԻԾ

Ներկայացնել հայերեն և անգլերեն, յուրաքանչյուրը մինչև 10 էջ.

1. Անոտացիա
2. Խնդրի արդի վիճակի վերլուծությունը
3. Թեմայի գիտական նպատակները և խնդիրները
4. Հետազոտական ծրագիրը
5. Օրացուցային պլանը (ըստ եռամսյակների)՝ ներառելով ակնկալվող արդյունքները
6. Միջազգային համագործակցության նախադրյալները
7. Հրավիրյալ պրոֆեսորի հետ համագործակցության նկարագրությունը
8. Օգտագործված գրականության ցանկը

Ազգանունը, անունը, հայրանունը	*հայերեն*	
	անգլերեն	
Ծննդյան տարեթիվն ու ծննդավայրը		
Կրթությունը *(բուհ, մասնագիտություն)*		
Գիտական աստիճանը		
Վերջին թեզի ծածկագիրը, վերնագիրը, պաշտպանության տարեթիվն ու վայրը		
Հրատարակված - գիտական հոդվածների թիվը - մենագրությունների թիվը		
Արտոնագրերի թիվը		

Վերջին 5 տարում հրատարակված գիտական հոդվածները *(նշել վերնագիրը, ամսագիրը, տարին, հատորը, էջերը).*
1.
2.
...

ՀՀ ԿԳՆ գիտության պետական կոմիտեից և այլ աղբյուրներից *(նաև օտարերկրյա)* ստացված դրամաշնորհները, նշել ներկայումս ակտիվ դրամաշնորհները.
1.
...

Հավելված N1.3.4

Ներկայացնել հայերեն և անգլերեն

ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ ՆԱԽԱԳԾԻ ԿԱՏԱՐՈՂԻ ՄԱՍԻՆ[2]

Ազգանունը, անունը, հայրանունը	*հայերեն*	
	անգլերեն	
	ռուսերեն	
Ծննդյան տարեթիվն ու ծննդավայրը		
Կրթությունը *(բուհ, մասնագիտություն)*		
Գիտական աստիճանը		
Վերջին թեզի ծածկագիրը, վերնագիրը, պաշտպանության տարեթիվն ու վայրը		
Աշխատանքի վայրը, պաշտոնը		
Հեռախոս		
Էլեկտրոնային հասցե		
Նախագծի հետ առնչվող հրատարակված գիտական հոդվածները (*նշել հեղինակներին, վերնագիրը, ամսագիրը, տարին, հատորը, էջերը*). 1. 2. …		

[2] *Ներկայացնել յուրաքանչյուր կատարողի համար*

ՀԱՅՏԻ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՆԱԽԱՀԱՇԻՎ

ԱՇԽԱՏԱՆՔԻ ՎԱՐՁԱՏՐՈՒԹՅՈՒՆ (*ներառյալ եկամտային հարկը*)									
	2022			2023			2024		
ազգանուն անուն հայրանուն	ամսական	ամիսների քանակ	պահանջվող գումար	ամսական	ամիսների քանակ	պահանջվող գումար	ամսական	ամիսների քանակ	պահանջվող գումար
1)									
2)									
3)									
4)									
5)									
ԸՆԴՀԱՆՈՒՐ ԳՈՒՄԱՐ									

ԱՅԼ ԾԱԽՍԵՐ(*100000 ՀՀ դրամը գերազանցող բոլոր ծախսերը հիմնավորվել նախագծում մեջ*)

1. ՍԱՐՔԵՐ, ՆՅՈՒԹԵՐ ԵՎ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐ	2022	2023	2024
1)			
...			
ԸՆԴՀԱՆՈՒՐ ԳՈՒՄԱՐ			
2. ԳՈՐԾՈՒՂՈՒՄՆԵՐ (*հիմնավորել նախահաշվի մեկնաբանության մեջ*)	2022	2023	2024
1) գործուղումների տրանսպորտային ծախսեր			
2) գործուղումների կեցության ծախսեր			
3) գործուղումների հետ կապված այլ ծախսեր (*վիզա կամ այլ վճարումներ*)			
ԸՆԴՀԱՆՈՒՐ ԳՈՒՄԱՐ			

Հրավիրյալ պրոֆեսորի աշխատանքի վարձատրություն

	2022			2023			2024		
ազգանուն, անուն, հայրանուն	օրավարձ	օրերի քանակ	պահանջվող գումար	օրավարձ	օրերի քանակ	պահանջվող գումար	օրավարձ	օրերի քանակ	պահանջվող գումար
1)									
2)									
ԸՆԴՀԱՆՈՒՐ ԳՈՒՄԱՐ									

Հրավիրյալ պրոֆեսորի գործուղման ծախսեր	2022	2023	2024
1) գործուղումների տրանսպորտային ծախսեր			
2) գործուղումների կեցության ծախսեր			
3) գործուղումների հետ կապված այլ ծախսեր (*վիզա կամ այլ վճարումներ*)			
ԸՆԴՀԱՆՈՒՐ ԳՈՒՄԱՐ			
ՀԱՅՑՎՈՂ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԳՈՒՄԱՐ			

Խմբի ղեկավար՝ _____ (*ստորագրություն*) _____ (*ազգանուն, անուն, հայրանուն*)

Գլխավոր հաշվապահ՝ _____ (*ստորագրություն*) _____ (*ազգանուն, անուն, հայրանուն*)